

2799

227

ПОЛОЖЕНИЕ

О ПОЛЬЗОВАНИИ ВОДАМИ ДЛЯ ОРОШЕНИЯ ЗЕМЕЛЬ

ВЪ ЗАКАВКАЗЬѢ

и

ПРАВИЛА

для опредѣленія существующихъ правъ

ПОЛЬЗОВАНИЯ

ОРОСИТЕЛЬНОЮ ВОДОЮ.



ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹԻՒՆ

ԱՆԴՐԿՈՎԿԱՍՈՒՄ ՀՈՂԵՐԸ ՈՌՈԴՈՂ ԶՐԵՐԻՅ
ՕԴՏՈՒԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԵՒ

ԿԱՆՈՆՆԵՐ

ՈՌՈԴՈՂ ԶՐԻՅ ՕԴՏՈՒԵԼՈՒ ԱՅԺՄ ԳՈՅՈՒԹԻՒՆ
ՈՒՆՅՅՈՂ ԻՐԱՌՈՒՆԲՆԵՐԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՀԱՄԱՐ

ТИФЛИСЬ.

Типогр. Канцел. Главнонач. гражд. ч. на КавказѢ.

1892.

14356

2999

ПОЛОЖЕНІЕ
О ПОЛЬЗОВАНИИ ВОДАМИ ДЛЯ ОРОШЕНІЯ ЗЕМЕЛЬ
ВЪ ЗАКАВКАЗЬѢ
и
ПРАВИЛА
для опредѣленія существующихъ правъ
ПОЛЬЗОВАНІЯ
ОРОСИТЕЛЬНОЮ ВОДОЮ.


ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹԻՒՆ
ԱՆԴՐԿՈՎԿԱՍՈՒՄ ՀՈՂԵՐԸ ՈՌՈԳՈՂ ԶՐԵՐԻՑ
ՕԳՏՈՒԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Եւ

ԿԱՆՈՆՆԵՐ
ՈՌՈԳՈՂ ԶՐԻՑ ՕԳՏՈՒԵԼՈՒ ԱՅԺՄ ԳՈՅՈՒԹԻՒՆ
ՈՒՆԵՅՈՂ ԻՐԱԻՈՒՆՔՆԵՐԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՀԱՄԱՐ

ТИФЛИСЪ.

Типогр. Канцел. Главнонач. гражд. ч. на Кавказѣ.
1892.



Печатано по распоряженію Инспектора водъ на Кавказѣ.

Բնագրի վրայ ՆՈՐԻՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ
ՄԵԾՈՒԹԵԱՆ ՍԵՒՀԱԿԱՆ ձեռքով
գրուած է.

«Եղիցի ըստ այսմ»

Գատչինայում

Դեկտեմբերի 3-ին 1890 թ.

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹԻՒՆ

ԱՆԴՐԿՈՎԿԱՍՈՒՄ ՀՈՂԵՐԸ ՈՂՈՂՈՂ (ՋՐՈՂ)
ՋՐԵՐԻԳ ՕԳՏՈՒԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹԻՒՆ:

1) Կալուածատիրոջ (տիրապետի-հողատիրոջ)
իրաւունքը Ջրերի վրայ, երբ նոքա դուրս են հո-
սում (անցնում են) մի տիրապետութեան սահմա-
նից, սահմանափակվում է մասնակցութիւն ունե-
նալու իրաւունքով այդ Ջրերու վրայ և ուրիշ կա-
լուածատէրերի (տիրապետերի) թէ ուղղելու (հող
Ջրելու) և թէ այլ նպատակների համար (յօդ. 26)
այս կանոնադրութեան հիման վրայ: Այն Ջրերը,
որոնք սկիզբն առնելով մի տիրապետութեան (կա-
լուածքի) սահմանում՝ բնական ճանապարհով չեն
դուրս հոսում այն տեղից միշտ կամ տարուան որոշ

ժամանակներին, գտնվում են կալուածատիրոջ (տիրապետի-հողատիրոջ) բացառիկ տնօրինութեան տակ:

2) Ոռոգման (հող ջրոյ) ջրից օգտուելու իրաւունքը հողի տիրապետութեան պատկանող մասն է և այդ իրաւունքը չէ կարելի (արգելում է) զիջանել (տալ) այն տիրապետութեան (կալուածքի) սահմանից դուրս:

3) Ոռոգման (ջրելու) համար մինչև այժմ գոյութիւն ունեցող ջրից օգտուելու իրաւունքը պահպանվում է այս կանոնադրութեան մէջ ցոյց տրուած սահմաններով:

4) Ոռոգման ջրից օգտուելու իրաւունքները վաւերացվում են առանձին վկայականներով, որոնք տրւում են ջրերի վերատեսչից (ինսպեկտոր-վոյ) (յօդ. 8) ժամանակաւոր—գաւառական (օկրուժնի) և գլխաւոր (գլաւնի) ատեսնների վճիռների հիման վրայ, որոնք տրուած կը լինին համաձայն սորա հետ կցուած կանոնների կամ այն թոյլատւութիւնների հիման վրայ, որ տուած կը լինին այս կանոնադրութեան 25 յօդուածում ցոյց տուած կարգով:

5) Կառավարութեան է վերապահուած անհրաժեշտ (հարկաւոր) դէպքում առուհանքների սիստէմը փոփոխելու իրաւունքը, բարեփոխութեան (լաւացնելու) և ջուր խնայելու նպատակով:

Ծանօթութիւն 1. Ոռոգման սիստեմի բարեփոխութեան ժամանակ ջրից օգտուելու համար տրուած վկայականները վերստինութեան և համապատասխան ուղղութեան են ենթարկւում այն պայմանով միայն, որ իւրաքանչիւր մասն ունեցողին յաակացուի (հասնի) ոչ պակաս ջրի այն քանակութիւնից, որն որ առաջուց հասնում էր նրա ուղղելի (ջրելի) հողին:

Ծանօթութիւն 2. Եթէ որ ոռոգման սիստեմի բարեփոխութիւնը կատարուի այն ջրից օգտուելու մասն ունեցողների իրանց միջոցով, այն ժամանակ ջրի աւելորդը մնում է նրանց օգտին, բայց եթէ բարեփոխութիւնը կատարէ կառավարութիւնը (տէրութիւնը), այն ժամանակ ջրի աւելորդը մնում է իւր տնօրինութեան տակ, նոր բաժանողութիւն անելու համար:

ՋՐԵՐԻ ԳՈՐԾԵՐԸ ՎՃՌՈՂ, ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ:

6) Անդրկովկասի ջրերը, որոնք ունին նշանակութիւն հողերը ոռոգելու (ջրելու), գտնվում են Արքունի Կալուածների Նախարարութեան տնօրինութեան տակ և բաժանվում են Արքունի Կալուած-

ների Նախարարի և Կովկասու լքաղաքական բաժնի Կառավարչապետի համաձայնութիւնով առանձին առանձին գաւառների (օկրուգ—մահալ): Աղբա կազմվում են իւրաքանչիւր ջրերից կամ ուրիշ ջրամբարներից, որոնք ջուր են մատակարարում մի ոռոգման սիստեմի:

Ծանօթութիւն. Նաւագնաց կամ լաստաբեր գետերի և լճերի ջրից օգտուիլը, ինչպէս նաև ոռոգման (հող ջրելը) նպատակին ծառայող ամենայն տեսակ շինուածների նրանց վրայ կառուցումը (շինել), որոնք հարկաւոր են ոռոգման համար, թոյլատրվում են միայն նախապէս համաձայնութիւն կայացնելուց յետոյ—Արքունի Կալուածների ու ձանապարհների Հաղորդակցութեան ենթակայ հաստատութիւնների հետ:

7) Անդրկովկասի ջրերի բոլոր գործերի կառավարութիւնը յանձնվում է ջրերի վերատեսչին (ինսպեկտոր վօդ), ոռոգման սիստեմների կառավարութիւնը իրենց տեղերում յանձնվում է ջրաբաշխ—ինժիներներին (ինժիներ—գիդրաւիկ): Ջրերի վերատեսչի ձեռաց տակ կայ մի իրաւագէտ խորհրդական (իւրիսկոնսուլտ) և ղիւանատուն (կանցելիարիա): Իւրաքանչիւր ջրաբաշխ—ինժիների ձեռաց տակ կայ մի ուղղեցոյց (կոնդուկտոր):

Ծանօթութիւն: Ջրերի վարչութեան պաշտօնեայ

անձանց գործողութեան կարգը որոշվում է Արքունի Կալուածների Նախարարի հրահանգներով:

8) Ջրերի վերատեսչի պարտականութեանցը վերաբերում են—ա) վերահասութիւն ունենալ տեղն ու տեղը ջրաբաշխ—ինժիներների ձեռնարկած աշխատանքների (շինութիւնների) վրայ, բ) յօրինել առաջադրութիւններ այն հարցերի մասին, որոնք ծաղում են գործադրութեան մէջ եղած օրէնքների անլիութեան կամ անպարզութեան պատճառաւ: գ) Ջրերի գաւառը (օկրուգ—մահալ) գաւառականների բաժանել և դ) ոռոգման սիստեմների ջրից օգտուելու իրաւունք ունենալու համար վկայականներ տալ: Ջրերի վերատեսուչը (ինսպեկտոր վօդ) մասնակցում է իբրև ձայն ունեցող անդամ Կովկասու լքաղաքական բաժնի Կառավարչապետի խորհրդարանին, երբ այնտեղ վճռվում են նրա բաժնին վերաբերեալ գործեր:

Ծանօթութիւն. Ոռոգման անտեսութեան բարեկարգութեանը ու զարգացմանը վերաբերեալ բոլոր ընդհանուր առաջադրութիւնները ջրերի վերատեսուչը (ինսպեկտոր վօդ) ներկայացնում է Կովկասու լքաղաքական բաժնի Կառավարչապետին, որը այդ առաջադրութիւնները իւր եզրակացութիւններով հաղորդում է Արքունի Կալուածների Նախարարին:

9) Ջրաբաշխ—ինժիներների պարտականութիւն-

ներին վերաբերում են. ա) ջրից օգտուելու իրաւունքները որոշող զաւառական (օկրուժնոյ) ատեաններում նախագահել. բ) վերահասութիւն ունենալ ջրերի զաւառական (օկրուժնոյ) հաստատութիւններում ծառայող պաշտօնեաների գործողութիւնների վրայ. գ) իւրաքանչիւր գետի աւազանի գործադրութեան մէջ եղող ջրանցքների յատակագծերը. (պլան) կազմել. դ) գետերի և առուհանքների ջրի քանակութիւնն և ոռոգելի (ջրուելու) տափերի տարածութիւնը որոշել. ե) ոռոգման ծառայող շինութիւնների համար նախագծեր (պրոյեկտներ) կազմել. զ) յայտնի կացուցանել ազատ ջրերի քանակութիւնը և նմանապէս այն տեղերի (տափերի) քանակութիւնը, որոնք պահանջում են նորից ջուր հանել, ցամաքացնել կամ հեղեղներից ազատել. է) այդպիսի աշխատութեանց կատարելու համար նախագծեր (պրոյեկտներ) և նախահաշիւներ (սմետներ) կազմել և ը) սահմանուած կարգով հաստատութիւն ստացած նախագծերն իրագործել:

10) Տարւում որոշ ժամանակին Թիֆլիզում կազմվում է ջրաբաշխ-ինժինիրների ժողով (սբեդդ) իրաւագէտ խորհրդականի մասնակցութեամբ և ջրերի վերատեսչի նախագահութեամբ: Այս ժողովի իրաւասութեան վերաբերող գործերն են. ա) զննութիւն այն խնդրագրերի, որոնք վերաբերում են ազատ

ջրերի դուրս հանելուն, ոռոգման կարեւոր հետազօտութիւններ ձեռնարկելուն, և արքունի կամ մասնաւոր անձանց պատկանող հողերով առուհանքներ անցկացնելուն, և այդ բանի համար կազմուած նախագծերի հաստատութիւնը. բ) զննել ու հաստատել ջրաբաշխ-ինժինիրների կազմած նախագծերը և նախահաշիւները (յօդ. 9), որոնք կազմած կը լինին գործադրութեան մէջ եղած առուհանքների սխառեմների բարեփոխութեան (լաւացնելու) մասին, նոր ջրամբարներ շինելու կամ թէ ոռոգման, ցամաքեցնելու և այլ այդպիսի շինութիւններ կառուցանելու և գ) իւրաքանչիւր ջրաբաշխ-ինժինիրների առաջիկայ տարւան համար կազմած զբաղման ծրագրի (պլանի) հաստատութիւնը:

11) Ջրի զաւառի (մահալի-օկրուգի) գործերի կառավարութիւնը յանձնվում է նոյն մահալի ջրից բոլոր օգտուողներից ընտրուած պատգամաւորների խորհրդին, զաւառական ջրաբաշխին (միրաբին), առուների վերակացուներին (ջուարներին) և ջրպետներին (վօդնի ստարստաներին):

12) Նախընթաց (11) յօդուածում յիշուած բոլոր պաշտօնատար անձինք ընտրութիւնով են նշանակվում և թոյլատրութիւն են ստանում իւրեանց պարտականութիւնները կատարելու, ջրի զաւառից (մահալից) ընտրուած պատգամաւորները և գա-

լառի ջրաբաշխը (օկրուժնոյ ստարշինա)—միրաբը՝ նահանգապետից, իսկ առուների վերակացուները (ջուարները) և ջրբաշխները (վոդնի ստարոստա) գաւառապետից (ուեզդնի նաչալնիկից):

Մասնաւորութիւն 1. Ջրի գաւառից (օկրուզից—մահալից) ընտրուած պատգամաւորներին և գաւառի ջրաբաշխին (օկրուժնոյ ստարշինին—միրաբին) փոխարինողներ (կանդիտաներ) են ընտրւում:

Մասնաւորութիւն 2. Ջրից օգտուելու մասնակցութիւն ունեցող անձանց հրաւիրելու և ընտրութիւններ կատարելու կարգը որոշում է Արքունի Կալուածների Նախարարը համաձայնութեամբ Ներքին գործոց Նախարարի և Կովկասու քաղաքական բաժնի Կառավարչապետի:

Մասնաւորութիւն 3. Մինչև գաւառում (օկրուզ—մահալ) ջրից օգտուողների իրաւունքների որոշելը և ընտրողական ցենզի որոշումն, այժմս գոյութիւն ունեցող ընտրական կարգը պահպանւում է:

13) Ջրերի հաստատութիւնների պաշտօնեայ անձինք իւրեանց պաշտօնն անկարգ կատարած դէպքում հեռացւում են իրենց պաշտօնից ժամանակաւորապէս—գաւառի ջրաբաշխները՝ (օկրուժնի ստարշինա—միրաբն) ջրերի վերատեսչի ձեռքով (ինսպեկտոր վոդ) նահանգապետի հետ համաձայնութիւն կայացնելուց յետոյ, առուների վերատեսուչները՝

(ջուարները)—ջրաբաշխ—ինժեներների ձեռքով, համաձայնութեամբ գաւառապետների (ուեզդնի նաչալնիկների), ջրպետները՝ (վոդնի ստարոստա) ջրից օգտուողների ժողովով, իսկ բոլորովին հրաժարեցնւում են (հեռացնւում են) իրենց պաշտօնից այն իշխանութիւնների միջոցով, որոնցից իրաւունք էին ստացել իրենց պաշտօնները կատարելու (յօդ. 12):

14) Ջրի գաւառից (մահալից—վոդնի օկրուզից) ընտրուած պատգամաւորների խորհուրդն ընտրւում է ջրից օգտուելու մասնակցութիւն ունեցողներից երեք տարի ժամանակով, սորա համար ջրի գաւառի (վոդնի օկրուզի—մահալի) իւրաքանչիւր գաւառակը ընտրում է մի պատգամաւոր, խորհրդի պարտականութիւնն է—ամբողջ ջրի գաւառի (վոդնի օկրուզի—մահալի) շահերին վերաբերող հարցերի վճռելը, որ են— ա) ջրի կանոնաւոր բաժանումը իւրաքանչիւր գիւղի կամ առանձին տիրապետութեան սահմանին հասցնող առուհանքների մէջ, բ) խիստ երաշտութեան տարիներում ժամանակաւոր ջուր բաժնելու կարգի հաստատելը, գ) առուհանքների ափերին ծառեր ու թփեր տնկելու իրաւունք տալը, տնկելու հնարների և տունկերի տեսակների ցոյց տալը, դ) առուհանքների, նրանց ճիւղերի և այլ շինուածների վերանորոգութիւնը և նոր շինու-

թիւներէի համար եղած աշխատութիւններէի բա-
ժանումը, ե) այն գումարների որոշումն և բաժա-
նումը ջրին մասնակցութիւն ունեցողների մէջ, որոնք
հարկաւոր են շինուածքների և ջրանցքների վերա-
նորոգութիւնների ու ջրի գաւառի (օկրուգ-մա-
հալ) պաշտօնատար անձանց, բացի ջրպետներից
(փօղնի ստարստաներից), ռոճիկներ տալու համար:
զ) Թոյլաւութիւն տալ օտարի հողով ջուր անց-
կացնելու կամ օտարի առուհանքից օգտուելու այն
զիպուածում, երբ հեղեղը տարած լինի առու-
հանքների գլխերի շինուածքները երկիրը ոռոգելու
ժամանակ (շրջան) և անհնարին լինի այդ շի-
նուածքները նորոգել ջրի իջնելուց (պակասե-
լուց) առաջ: Է) գաւառի սահմաններում ոռոգ-
ման (հող ջրելու) և ցամաքացնելու համար շի-
նուածքներ շինելուն պէտք եղած հողերի գնահա-
տութիւնը (ացենկան), եթէ յօժարակամ համաձայ-
նութիւն չի կայանայ կողմերի (փիճողների) մէջ:
Խորհրդին նախագահում է գաւառի ջրաբաշխը
(միրաբը):

15) Գաւառի ջրաբաշխը (կամ միրաբն) ընտրու-
վում է երեք տարի ժամանակով բոլոր ջրի գաւառի
(մահալի) ջրից օգտուելու մասնակցութիւն ունե-
ցողներից: Նրա պարտականութիւններն են—ա) ջրի
բաժանումը այն առուհանքների մէջ, որ ջուր են

հանում բնական ջրամբարներից կամ հիմնական
առուհանքից: բ) վերահասութիւն ունենալ ջրի վե-
րակացուների (ջուարների) գործողութիւնների վը-
րայ: գ) վերականգնել ջրից օգտուելու խանգա-
րած կարգը, բացի այնպիսի խանգարումներից, որ
վերաբերում են ջրի ներքին բաժանմանը զիւղերում ու
քաղաքներում, որոնք ջրպետների (փօղնի ստարստա-
նների) իրաւունքին են վերաբերում: դ) ստիպել ջրից
օգտուելու մասնակցութիւն ունեցողներին, որ ջրի
վերակացուների (ջուարների) օրինաւոր պահանջները
կատարեն և է) վերահսկողութիւն ունենան ջրի
պակասութեան ժամանակ նշանակած ջրով օգտուե-
լու հերթի ճիշդ պահպանութեանը:

16) Առուների վերակացուն (ջուարն) ընտրու-
վում է մէկ տարով ոռոգման (հող ջրելու) առու-
հանքի ջրից օգտուելու մասնակցութեան իրաւունք
ունեցողներից: Նրա պարտականութիւններն են—
ա) հսկել առուների կարգին պահպանութեանը,
առուհանքի գլխից ներս հոսող ջրի քանակութեանը
և առանձին առանձին զիւղերի և հողային տիրա-
պետութիւնների առուների մէջ հոսող ջրերի բա-
ժանման վրայ և բ) ջուրը պահպանել յափշտակու-
թիւնից: Առուների վերակացուն (ջուարն) իրաւունք
ունի իւր նկատած ջրից օգտուելու համար որոշուած
կարգի պատահած շեղումներին վերջ դնել, յայտ-

նելով այդ մասին գաւառի (օկրուգի, մահալի) ջրաբաշխին (միրաբին): Վերջինս իրաւունք ունի առունների վերատեսչի (ջուարի) կարգադրութիւնը փոխել:

17) Զրպետն (վոդնի-ստարստան) ընտրվում է մէկ տարով, իւրաքանչիւր գիւղի կամ քաղաքի ջրից օգտուող մասնակիցներից: Նրա պարտականութիւններն են—ա) վերահասու լինել ջրի բաժանմանը ջրատէրերի մէջ և իւրաքանչիւր գիւղի կամ քաղաքի առունների կարգին պահպանութեանը. բ) ջուրը պահպանել յափշտակութիւնից. գ) ջրից օգտուելու համար որոշեալ կարգի շեղումների առաջն առնել և դ) վերականգնել խանգարուած իրաւունքները:

18) Զրի գաւառի (օկրուգի-մահալի) պաշտօնատար անձինք իւրեանց պարտականութիւնները անկանոն ու անհոգութեամբ կատարելու համար, զրամական տուգանքի են ենթարկւում մէկ ռուբլուց մինչև յիսուն ռուբլի ջրաբաշխ-ինժեներների վճռով: Այդ վճիռների դէմ եղած բողոքները (զանգատները) պէտք է տրուին ջրերի վերատեսչին (ինսպեկտոր վոդ):

Примечание: Тугоумные штрафы вносятся за то, что должностные лица округа (округ-мал) не надлежащим образом выполняют свои обязанности по управлению водными ресурсами.

ՈՌՈԳՄԱՆ (ՀՈՂԵՐԸ ԶՐՈՂ) ԶՐԻՅ ՕԳՏՈՒԵԼՈՒ ԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ:

19) Զրից օգտուելն այն չափով՝ որ որոշուած է այդ մասին տուած վկայականներում, կատարվում է այն կարգով, որ ցոյց է տուած ջրից օգտուելու իրաւունքները որոշող ատեանների վճիռների և նրանցը կցուած ցուցակների (վէդոմոստների) մէջ:

20) Քաղաքներում և գիւղերում ջրից օգտուելու կարգը սահմանվում (որոշվում է) է ջրից օգտուողների ժողովի վճռով: Ընդհանուր կալուածքի մասնակից տիրողները, որոնք օգտուում են առանձին առանձին բաժիններով (մասերով), փոխադարձ համաձայնութիւնով կազմում են ջրից օգտուելու կարգի ցուցակը: Այդպիսի մի ցուցակ ևս կազմում է այն կալուածքի տիրապետը, որը տուած է օգտուելու մի քանի անձանց:

Примечание: В случае, когда в одном и том же месте находятся несколько владельцев участков, принадлежащих к одному району, они должны составить общий план управления водными ресурсами.

21) Հոսող ջրի քանակութիւնը ճիշդ և միակերպ որոշելու համար չափսի միութիւն է ընդունվում բաշը:

Примечание: Водный расход измеряется в 1/400 (сотой) доли.

նարդ սաժինի և բաժանվում 25 լիտրի, այսինքն այնքան մասերի, որոնցից իւրաքանչիւրը հաւասար է $\frac{1}{10 \cdot 000}$ խորանարդ սաժենի:

22) Իւրաքանչիւր մասնակցողին պատկանող ջրի բաժինը որոշվում է բաշի հաշուով վկայականներում, որ տրւում են ջրից օգտուելու համար և բաժանվում է ամեն մի գլխաւոր և թէ երկրորդական առուհանքի դիւից կամ ամեն մի ջրանցքի սկզբից: Բնական ջրամբարներում ջրի պակասելու և աւելանալու ժամանակ մասնակցողներուն տրուելու ջրի քանակութիւնը փոփոխվում է համեմատ ջրի պակասելուն կամ աւելանալուն:

Ծանօթութիւն: Բաշերի հաշիւը կատարվում է (որոշուում է) ամարային ոռոգման (հող ջրելու) ժամանակին ծախսուած ջրի քանակութեան միջին հաշուով, բայց եթէ հարկաւոր լինի, նաև ոռոգման գարնանային և աշնանային շրջաններում:

23) Ոռոգման առուհանքների և ջրանցքների ջրից օգտուողներից ամէն մէկը մասնակցում է անձնական աշխատանքով կամ դրամական վճարներով, համեմատ իւր ջրից օգտուելու չափին, ջրերի շինութիւնների պահպանութեան, վերանորոգութեան (րեմօնտ) և նրանց կառավարութեան մասին պահանջուած ծախքերին:


24) Ազատ ջրից օգտուելու համար իրաւունք

ստանալու խնդրագրերը տրվում են Ջրաբաշխ-ինժիներին, որ իւր եզրակացութիւնով այդ ներկայացնում է ջրերի վերատեսչին, Ջրաբաշխ-ինժիններին ժողովի մերձաւոր նստաշրջանի (սրեզդ) քննութեանը ներկայացնելու համար: Այս ժողովը համոզուելով, որ խնդրած ջուրն կարելի է և օգտակար է տալ, տալիս է թոյլատուութիւն անհրաժեշտ հետադատութիւններն անելու և շինութիւնների մանրամասն նախագիծը (պրոյեկտը) կազմելու, այդ բանի համար որոշուած ժամանակամիջոցի ընթացքում:

25) Ջրաբաշխ-ինժիններին ժողովը, կազմուած նախագիծը բաւականացուցիչ համարելով, հաստատում է այդ՝ և եթէ արտահանելու ջրի քանակութիւնը 10 բաշից աւելի է, թոյլ է տալիս աշխատանքները կատարելու, որի համար և ժամանակ է նշանակում: Եթէ արտահանելու ջրի քանակութիւնը 10 բաշից աւելի չլինի, ապա ջրի արտահանելը թոյլատրվում է Արքունի Կալուածների Նախարարից, համաձայնութեամբ Կովկասու քաղաքական բաժնի Կառավարչապետի:

Ծանօթութիւն: Նախագծերի (պրոյեկտների) լրացումները և փոփոխութիւնները, որոնք անհրաժեշտ կերևան աշխատանքների կատարելու ժամանակ, թոյլատրվում են վերատեսչից (Ծան. 7 յօդ.):

26) Երբ մի և նոյն ջուրը արտահանելու մա-



սին մի քանի խնդրագրեր են ներկայացուած միա-
ժամանակ, այդ խնդրագրերը, իւրեանց պահանջի
տեսակի համեմատ, հատուցում են ստանում հե-
տեւալ կարգով. ա) խմելու, բնակիչների անային
պէտքերի և անասուններին ջուր տալու համար.
բ) Ոռոգելու (հող ջրելու) համար և գ) ջրաշարժ
ու արդիւնագործական գործարանների համար:

27) Եթէ հետազօտութիւն կատարելու իրա-
ւունք ստացողը չը ներկայացնի որոշեալ ժամանա-
կին շինութիւնների նախագիծը (պրոյեկտ) և աշ-
խատանքները ձեռնարկելու իրաւունք ստացողը
որոշեալ ժամանակին չը վերջացնէ այդ աշխատանք-
ները համաձայն հաստատուած նախագծի, և ժա-
մանակակէտի անցկացնելու պատճառները յարգելի
համարուն, ապա յիշեալ անձանց նոր ժամանա-
կակէտ է նշանակվում, իսկ երբ նոր ժամանակա-
կէտում էլ անձիշդ գտնուին, նրանք զրկվում են ջրի
իրաւունքից, թէ որ աչքի առաջ կայ մի ուրիշ այդ
ջուրը խնդրող անձն:

Ծանօթութիւն: Յօդուած 24, 25 և 27 յիշուած
ժամանակակէտների տեղութիւնները որոշվում են
Արքունի կալուածների Նախարարի հրահանգով
(յօդ. 7 ծանօթ.):

28) Իւրաքանչիւր հողատէր պարտական է
փոխարէնը վարձ ստանալով, իւր հողի միջով ճա-

նապարհ տալ այն ջրերին, որոնց անցկացնելը հար-
կաւոր է ջրից օգտուելու իրաւունք ունեցող ան-
ձանց, հասարակութիւնների և հաստատութիւն-
ների այնպիսի պէտքերի կատարելու համար, որ
նշանակուած են 26 յօդուածում, ու ոռոգուող հո-
ղերից ջրի աւելացած մասը դուրս հանելու համար:

29) Զրից օգտուելու իրաւունք ստացող ան-
ձինք, հասարակութիւններն ու հաստատութիւն-
ները կարող են, ջուր հանելու համար, ջրաբաշխ-
ինժինեւրների ժողովի (սրեկդ) թոյլատուութիւնով
իւրեանց ամբարտակները (կցել) շինել ուրիշնե-
րին պատկանող ափերի վրայ: Ափի տէրը դրա
համար առանձին վարձատրութիւն է ստանում
(յօդ. 31):

30) Օտարների (ուրիշների) հողերի վրայ առու-
հանքներ և ուրիշ շինութիւններ շինելու ժամա-
նակ, դրանց համար պահանջուած հողի շերտի լայ-
նութեան չափը որոշում է ջրաբաշխ-ինժինեւրների
ժողովը շինութեան նախագծի հաստատութեան
հետ միասին և սորա համար հաշուի է առնում
ոչ միայն նոյն շինութիւնների չափսը, այլ նաև մը-
շակների անցուղարձի ճանապարհը, շինութիւնների
նիւթերի դարսելու և առուհանքից հանած հողի
և այդպիսի բաների բռնելու տեղը:

31) Առուհանքների և այլ շինութիւնների հա-

մար պէտք եկած հողերի օտարացումն (յօդ. 28, 29) և զրանց տէրերի համար վարձատրութիւն նշանակելը կատարվում է երկաթուղիների համար հողեր զիջանելու մասին եղած կանոնների հիման վրայ, միայն այդ կանոնների հետեւալ փոփոխութիւններով: Տնտեսական հաստատ բնակութեան շինութիւնները (ուսողբա) չէ կարելի օտարացնել ոչ այլ կերպով եթէ ոչ տիրոջ համաձայնութեամբ: Եթէ օտարացնելու հողը գտնվում է ջրի գաւառի (մահալի-օկրուգի) սահմաններում, այն ժամանակ թէ յօժարակամ համաձայնութիւն չէ կայանում կողմերի (հողատիրոջ և հող ստացողի) մէջ տրուելիք վարձատրութեան չափի մասին, վարձատրութիւնը նշանակվում է գնահատութեան հիման վրայ, որ կատարում է ջրի գաւառից (մահալից-օկրուգից) ընտրուած պատգամաւորների խորհուրդը, ջրաբաշխ-ինժիների մասնակցութիւնով: Այս բանի մասին եղած խորհրդի վճիռների դէմ կարելի է բողոքել Կովկասու. քաղաքական բաժնի Կառավարչատեղին, որը վճռում է դանդաղ գործը իւր խորհրդարանում քննելուց յետոյ:

Ծանօթութիւն: Երբ առուհանքը շինվում է ոռոգումից յետոյ մնացած ջրի դուրս թողնելու համար, այն ժամանակ առուհանքին պէտք եկած հողի վարձատրութիւնը տրվում է միայն այն դիպուածքում,

եթէ հողի տէրը չէ կամենում օգտուիլ արտահոսող ջրից:

32) Եթէ ենթադրուած ջրի դուրս տանելու պատճառով մի հողի մասից կամ անտեսական հաստատ բնակութիւնից օգտուելը դառնում է անկարելի, հողատէրն իրաւունք ունի 31 յօդուածում ցոյց տուած կարգով պահանջել ամբողջ հողի կամ անտեսական հաստատ բնակութեան դինը:

33) Ջրի տիրապետութեան իրաւունքը, որ հաստատուած է վկայականներով (յօդ. 4) կորուսանվում է՝ եթէ առուհանքը կամ ջրանցքը, անկարգ պահպանութեան շնորհիւ կամ ուրիշ պատճառներով, որ կախուած լինի նրանց տէրերից, մնացած լինին առանց համապատասխան զործածութեան հինգ տարուան ընթացքում:

34) Նախընթաց (33) յօդուածում ցոյց տուած դիպուածում ջրի իրաւունքից զրկուելու հետ միաժամանակ ջրատէրը զրկվում է և առուհանքի տակ եղած հողի շերտի տիրապետութիւնից: Սորա հետ առուհանքի տիրոջը իրաւունք է տրվում յընթացք երկամեայ արտօնութեան ժամանակամիջոցի քանդել իւր շինուածքները: Այս ժամանակամիջոցը անցկանալուց յետոյ չը քանդուած շինուածքները հողատիրոջ սեպհականութիւնն են դառնում:

ԿԱՆՈՆՆԵՐ

Ուռզող (հող ջրող) ջրից օգտուելու այժմ
գոյութիւն ունեցող իրաւունքները որոշե-
լու համար:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՆՈՆՆԵՐ.

1) Ուռզող ջրերից օգտուելու իրաւունքները որոշելու ժամանակ իբրեւ հիմունք ընդունվում են բնակիչների ջրի կարօտութիւնը և ջրից օգտուելու մասին գոյութիւն ունեցող իրաւունքը, որ վաւերացուած է տեղական աւանդական օրվորութիւններով, օգուտ քաղելու երկարամեայ տիրապետութեան (դաւնօստ) իրաւունքով, որ պէտք է տւած լինի յայտնի և անվիճելի կերպիւ շարունակաբար տասը տարուց ոչ պակաս, ինչպէս նաև վկաների ցուցմունքներով և զրաւոր ապացոյցներով:

2) Ուռզող ջրից օգտուելու իրաւունքները որոշելու համար սահմանվում են ժամանակաւոր ատեաններ գաւառական (օկրուժնոյ) և գլխաւոր (գլաւնի):

3) Իւրաքանչիւր գաւառական ատենի սահմանելու ժամանակը նշանակելը կախուած է ջրերի վերատեսչից, որը այդ մասին յայտարարում է տեղական պաշտօնական հրատարակութիւնների մէջ և ծանուցանում է բնակիչներին ոստիկանութեան (պօլիցիայի) միջոցով:

4) Յօդուած 3-որդում յիշուած յայտարարութիւնից յետոյ դատարաններում դադարեցվում են այն գործերի քննութիւնը, որ վերաբերում են գաւառի ջրերից օգտուելու իրաւունքներին, որոնց մասին դեռ վճիռներ չեն տրուած կամ տրուած վճիռները օրինական զօրութեան մէջ չեն մտել: Այդ գործերը յանձնվում են գաւառական (օկրուժնոյ-մահալի) ատեանին անմիջապէս նրա բացումից յետոյ:

5) Ջրից օգտուելու իրաւունքները որոշելու համար խնդրագրերը տրվում են ջրերի վերատեսչին վեց ամսուան ընթացքում՝ հաշուելով տեղական պաշտօնական հրատարակութիւններում տուած առաջին յայտարարութեան օրուանից (յօդ. 3):

ՋՐԻՑ ՕԳՏՈՒՆԵԼՈՒ ԻՐԱՒՈՒՆՔՆԵՐԸ ՈՐՈՇՈՂ ԳԱՒԱ-
ՌԱՎԱՆ (ՕԿՐՈՒԺՆՕՅ) ԱՏԵԱՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ:

6) Գաւառական (օկրուժնոյ) ատեանները կազմը-
վում են ջրաբաշխ-ինժիների նախագահութեան ներ-

քոյ, հաշտարար միջնորդից (միրավոյ պասրեղնիկից) գաւառապետից (ուեզդնի նաչալնիկից) կամ նրա օգնականից և գաւառի բնակիչներից ընտրուած երեք անդամներից:

Ատենի նստին հրաւիրվում է գաւառի ջրաբաշխը (միրաբը) խորհրդակցական ձայնի իրաւունքով:

Ծանօթութիւն: Այն տեղերում, ուր հաշտարար միջնորդների (միրավոյ պասրեղնիկների) պաշտօններ դեռ չեն հաստատուած, գաւառական ատենին մասնակցելու հրաւիրվում են հաշտարար դատաւորների (միրավոյ սուդիաների) օգնականները:

7) Ատենի ընտրելի անդամ կարող է լինել իւրաքանչիւր չափահաս անձն, որ դատաստանի տակ չէ գտնվում և կամ չէ դատապարտուած այնպիսի յանցանքների համար, որոնց հետևանքն է զրկումն կամ սահմանափակումն անձնական վիճակի իրաւունքի:

8) Ատենի անդամների ընտրութեան համար ջրերի վերադասույթը գաւառը (մահալը-օկրուգը) երեք գաւառակի (ուչաստկի) է բաժանում: Իւրաքանչիւր գաւառակում ընտրվում է ատենի մի անդամ և մի կանգիդատ (փոխարինող):

9) Ատենի անդամն և նրա փոխարինողը (կանգիդատը) (յօդ. 8) ընտրվում են գաւառակի (ուչաստկի) գիւղական և քաղաքային հասարակութիւնների ու հողատէրերի ներկայացուցիչների ձեռքով:

Գիւղական և քաղաքային հասարակութիւններն ընտրում են ջրից օգտուող իւրաքանչիւր տասը ծովից մի ներկայացուցիչ. գիւղական հասարակութիւններն — մասնաւոր շինական ժողովներով, իսկ քաղաքայիններն — առանձին, նախագահութեամբ անգական ոստիկանութեան ղլխաւորի, ջրից օգտուող տանտէրերի ժողովներով:

Հողատէրերի ներկայացուցիչների ընտրութեան կարգը որոշվում է հրահանգներով, որ հրատարակում է Սրբունի կալուածների Նախարարը՝ համաձայնութեամբ Կովկասու քաղաքական բաժնի Կառավարչապետի:

Գիւղական և քաղաքային հասարակութիւնների և գաւառակի հողատէրերի ներկայացուցիչների ժողովն ընտրում է ատենի անդամին և նրա փոխարինողին (կանգիդատին) ձայների հասարակ մեծամասնութիւնով:

10) Ընտրուած անձն կարող է չ'ընդունել իւր վրայ ղրուած պարտականութիւնները, եթէ նոյն իսկ ընտրութեան ժամանակ յայտնէ, որ չէ կարող այդ պարտականութիւնները յանձն առնել:

11) Ատենի անդամների ընտրութիւնները կատարուած է համարում՝ եթէ նրանց մասնակցել են բոլոր ընտրողաց մի երրորդական մասնից ոչ պակաս թուով անձինք:

12) Ինչպէս ներկայացուցիչների նոյնպէս և ատենի անդամների ընտրութեան կանոնաւորութեանց վերահասու է լինում գաւառապետը (ուեզդնի նաչալնիկը):

Ատենի ընտրուած անդամներն և նրանց փոխարինողները (կանդիդատներն) ջրաբաշխ-ինժիների ու գաւառապետի (ուեզդնի նաչալնիկի) ներկայութեամբ երզվում են հաւատարմութիւնով ծառայելու:

13) Ծառայութեան դէմ գործած յանցանքների համար ատենի ընտրուած անդամները դատաստանի են ենթարկվում նահանգական վարչութեան (գուբերնսկի պրաււենիէ) ձեռքով և դատվում են նահանգական դատարանում (օկրուժնոյ սուդում):

14) Ատենի նիստերը (գասեդանիի) բացուելու ժամանակի և տեղի մասին ոստիկանութեան միջոցով յայտնվում է գաւառի (մահալի) բնակիչներին:

15) Կողմերը (շահ ունեցողները—գործի տէրերը) իրաւունք ունեն ներկայ լինելու գաւառական ատենի նստին.—գիւղերն—իրենց լիազօր ներկայացուցիչներով, որոնք պէտք է ընտրուած լինին հաւաքական վճիռների, իւրաքանչիւր գիւղից մի անձն, քաղաքային հասարակութիւնները—իրենց լիազօր ներկայացուցիչներով, որոնք պէտք է ընտրուին ոռոգող ջրից օգտուող տանտէրերի հա-

մախօսական վճռով, իւրաքանչիւր հասարակութիւններից մի անձն. պետական վարչութիւնները—ներկայացուցիչ անձանց միջոցով, համաձայն քաղաքացիական դատավարութեան (գրաժդանսկի սուդօպրոյիզվօդսովի) օրինադրքի 1285 և 1286 յօդուածների, քաղաքներից և գիւղերից առանձին հողաբաժնի տիրապետները—ներկայ են լինում կամ անձամբ, կամ իրենց կառավարիչների, կապալառուների և գործակատարների միջոցով, կամ թէ հաւատարմատարներով, որոնց վերաբերութեամբ գործ են զրվում նոյն օրինադրքի 45—47 յօդուածների կանոնները, մի քանի տէրեր ունեցող կալուածների ներկայացուցիչ են համարվում նստին ներկայ գրտնուող մասնատէրերը:

Կողմերի (շահ ունեցողների—գործ ունեցողների) չը ներկայանալը ատենի գործողութիւնները չէ դադրեցնում:

Ծանօթութիւն: Երբ ատենը քննում է գետից և նրա վտակներից հանած ջրից օգտուելու իրաւունքները, առանց որոշելու նրանցից հանած առուհանքերի ջրից օգտուելու իրաւունքները, այդ առուհանքների իւրաքանչիւրի կողմից մի ներկայացուցիչ իրաւունք ունի ներկայ լինելու: Առուհանքների ներկայացուցիչներին ընտրում են այն անձինք, որոնք օգտվում են այդ առուների ջրից, ընտրութիւնը կա-

տարվում է հետեւեալ կարգով. — իւրաքանչիւր դիւզ և քաղաքային հասարակութիւն ընտրում է մի ընտրող-ներկայացուցիչ, պետական վարչութիւնները մասնակցում են ընտրութիւններին լիազօրների (ուպուլ-նոմոչիննի) միջոցով. իսկ մնացած հողատէրերը կամ անձամբ կամ հաւատարմատարների միջոցով, ընտրող ներկայացուցիչների ժողովը ձայների հասարակ մեծամասնութիւնով ամբողջ առուհասքի կողմից մի ներկայացուցիչ է ընտրում և այդ մասին կազմում է համախօսական վճիռ (պրիզովոր), որն յանձնում է ներկայացուցչին: Ընտրութեան կարգի այլ մանրամասնութիւնները և ընտրութեանը հրահանգները եղանակը որոշում է Արքունի Կալուածների Նախարարը՝ Կովկասու քաղաքական բաժնի Կառավարչապետի համաձայնութեամբ:

16) Ատեանը ջրի տիրապետութեան իրաւունքի որոշելը սկսում է զեռի աւազանի վերին կամ ստորին մասերից, որոյ համար դուրս է դալիս, կարելի եղածին չափ ոռոգման ժամանակում, տեղերը շրջելու և ժողովում է այդ դործի մէջ օգուտ ունեցողների յայտարարութիւնները ու կազմում է արձանագրութիւն (պրօտօկօլ), որի մէջ գրում է բոլոր ցուցմունքները, ստուգելով այդ տեղի ընդհանուր հետազօտութիւնով. ձանապարհին պատահած փոփոխութիւնները համար ատեանը մի և նոյն կարգով յայտարար-

ութիւններ է ընդունում: Յայտնի կացուցանելով բոլոր պահանջների պատճառները զեռից և նրա վրա տալիս օգուտելու իրաւունքների մասին, ատեանը լսում է բոլոր ներկայ գտնուող կողմերի (դործ ունեցողների — իրաւատէրերի) բացաղութիւնները, քննում է ներկայացրած ապացոյցները, հարկաւոր դէպքում շրջաբնակ անձանց միջոցով հարցուփորձ (գաղնանիա) է անում, լրացուցիչ վերանկատողութիւններ է անում և հարցնում է վկաներին: Յետոյ ատեանը աշխատում է վիճողներին համաձայնեցնել և, եթէ այդ չէ յաջողվում, վճիռ է դնում ոռոգող (հող ջրող) ջրից օգտուող բոլոր անձանց, հասարակութիւնների և հաստատութիւնների, որոնք զեռից և նրա փոփոխութեան ջուր են ստանում, իրաւունքների մասին և նախադահը հրապարակաւ նշանակում է վճռի յայտնութեան օրը, նշանակելով այդ օրը երկու շաբաթից ոչ աւելի ուշ:

Ծանօթութիւն: Ջրից օգտուող անձի չը ներկայանալու դիպուածում, նրա իրաւունքները որոշվում են միւս ներկայ եղող անձանց յայտարարութիւններով, նոյնպէս, եթէ հարկաւոր է, տեղի վերանկատողութիւնով, զիւղապետներին (տանուաւորներին — ստարչինաներին) և հարեաններին հարց ու փորձ անելով և այլ այս յօդուածում ցոյց տուած միջոցներով:

17) Ատենի մէջ վճռուող գործերն ազատ են ամենայն տեսակ հարկերից, մինչև անգամ դրոշմաթերթի (գերբովի) հարկից:

18) Գործերի քննութիւնը կատարվում է հըրապարակաւ:

19) Վկաներին հարց ու փորձ անելու մասին կատարվում են քաղաքացիական դատավարութեան օրինագրքի (գրաժդանսկի սուդօպրոյիզվօդստվի) 83, 84, 86, 87, 93, 95 և 96 յօդուածներում բացատրեալ կանոնները:

20) Շրջաբնակ մարդկանց հարց ու փորձ անելում (դազնանիայ) ատենանք և կամ այն անձինք, որոնց յանձնուած է հարցափորձ անելը, կազմում են տեղական հին բնակիչների ցուցակը, կատարելով քաղաքիական դատավարութեան օրինագրքի (գրաժդանսկի սուդօպրոյիզվօդստվի) 417 յօդուածում բացադրեալ կանոնները: Յուցակից ընտրվում են վիճակով 12 մարդ. իսկ եթէ ցուցակի մէջ ընդ ամենն 12 մարդից աւել չը լինին, այն ժամանակ ընտրվում են 6 հոգի: Կողմերը (վէճ ունեցողները) իրաւունք ունին վիճակով ընտրուածներին հարցուփորձից հեռացնել քաղաքացիական դատավարութեան (գրաժդանսկի սուդօպրոյիզվօդստվի) 84 և 86 յօդուածներում յայտնուած պատճառներով: Բացի սրանից կատարվում են նոյն օրի-

նագրքի 420, 421, 432 և 435 յօդուածներում բացատրուած կանոնները:

21) Այն զէպքերն, որոնցում ատենանք, քննութեան ընթացքում, որ և իցէ դժուարութեան է հանդիպում, վճռում է յարմարուելով ներկայ կանոնների կարգադրութեանցը և հաշտարար դատաւաններում գործ դրուող օրէնքներին:

22) Ատենի գործողութիւնները, կողմերի (վէճ ունեցողների) էական բացադրութիւնները, նրանց ներկայացրած ապացոյցները և ցուցմունքները գրվում են ատենի արձանագրութեան մէջ (պրօտօկօլում):

23) Ատենի վճիռներում նշանակվում են.

ա) Այն անձինք, հասարակութիւնները ու հաստատութիւնները, որոնց իրաւունքը ջրից օգտուելու մասին—ձանաչուած է:

Ծանօթութիւն 1. Եթէ ջուրը առուհանքով հանվում է գետից կամ նրա վտակներից ոչ թէ մի անձի, այլ մի քանի անձանց, հասարակութեանց ու հաստատութեանց օգտուելու համար, այն ժամանակ նրանք նշանակվում են առանց առանձին առանձին իւրաքանչիւրի իրաւունքները որոշելու, բացի 32 յօդուածի ծանօթութեան մէջ ցոյց տուած դիպուածից:

Ծանօթութիւն 2. Եթէ հողը, ջրաղացը կամ մի այլ կալուածք, որոնց ջուր է բաց թողնվում, մի

քանի անձանց սեպհականութիւնն է, և բոլոր տէրերն ատենին յայտնի չեն, այն ժամանակ ջրի իրաւունքը զրկում է նրանցից մէկի կամ մի քանիսի անունով, առանց ցոյց տալու, ընդհանուր տիրապետութեան, իւրաքանչիւր բաժնատիրոջ հասնելու բաժնի չափը:

բ) Ջրի քանակութիւնը, որ տրվում է օգտուելու անձանց, հասարակութիւններին և հաստատութիւններին, նշանակում է բաշերով և ջրի այն ընդհանուր քանակութեան յարաբերական չափով, որ հոսում է գետի որոշեալ տեղով:

Ծանօթութիւն: Բաժինը որոշելու ժամանակ հիմք է առնվում գետի կամ առուհանքի որոշեալ տեղում ոռոգման համապատասխան ժամանակաշրջանում ունեցած ջրի քանակութեան միջին չափը:

գ) Թոյլ է տրուած արդեօք ջրից օգտուել մըշտապէս, պարբերաբար կամ տարուան որոշ ժամանակներին (վերջին երկու դիպուածում ձիշդ որոշվում են օգտուելու կարգը, շրջանները կամ ժամանակները):

դ) Թոյլ է տրուած արդեօք ջրից օգտուելու իրաւունքը տնային գործադրութեան և անասուններին ջուր տալու, ոռոգելու (հող ջրելու), մեքենաշարժ գործարանների գործադրութեան կամ որ և է այլ նպատակի համար:

ե) Կա՞ն արդեօք զաւառում (մահալում) կամ նրա առանձին մասերում սովորութիւններ, որոնցով սահմանափակվում են ջրաշարժ գործարանների ջրից օգտուելու իրաւունքները, ամառային ցանքեր անելու և այգիք տնկելու ազատութիւնը:

24) Ատենի պարտաւորութիւնների շրջանից դուրս է, քաղաքների և գիւղերի տանտէրերի ջրից օգտուելու բաժինները որոշելը, մինչև անգամ եթէ նրանց տիրապետութիւնը կալուածքի վերայ լինի ծխական: Այդպիսի բաժինները որոշում են ջրից օգտուող տանտէրերի ժողովները:

25) Ատենի վճիռների մէջ պէտք է բացատրուած լինին այն հիմունքները, որոնցով ճանաչուած է ջրից օգտուելու իրաւունքը վճռուած չափով, ձևով և վճռեալ ժամանակի ընթացքում:

26) Ատենի վճիռը պատրաստվում է նախագահի վերահսկողութեան ներքոյ և ստորագրվում է ատենի բոլոր անդամներից: Ընտրուած անդամի անդրադիտութեան դիպուածում, վճիռը նրա փոխարէն ստորագրում է նրա խնդրով մի այլ անձն: Առանձին կարծիքներ տալ թոյլատրվում է գործը վճռուելուց յետոյ երեք օրուան ընթացքում: Առանձին կարծիքները պէտք է տրուին նախագահին և կցուին վճռին:

27) Վճռին կցվում է ճանաչուած իրաւունքների

և ջրից օգտուելու կարգը ցոյց տուող ցուցակը (վեդոմոստ), որի ձեւը որոշում է Արքունի Կալուածների Նախարարը: Ցուցակին ստորագրում են ատենի բոլոր անդամները մի և նոյն ձեով ինչպէս և վճռին:

28) Նշանակած ժամանակին վճիռն յայտնվում է ատենի դռնեաց նստում ներկայ եղող կողմերին (վէճ ունեցողներին) կարդալով վճիռը և նրա հետ միասին կցուած ցուցակը, մի և նոյն ժամանակ նախագահը բացաղրում է՝ թէ ի՞նչքան ժամանակամիջոցում և ի՞նչ ձեով կարելի է այդ վճռի դէմ բողոքել:

29) Բողոքները կարող են լինել զրաւոր և բերանացի, դրանք ընդունվում են վճռի յայտնելուց յետոյ եօթն օրուան ընթացքում: Բողոքները արբւում են նախագահին կամ ատենի այն անդամին, որը վճիռը կարդալու ժամանակ ցոյց է տուած (անուանուած է): Բերանացի բողոքները գրում է բողոք ընդունողը, կարդում է բողոքողի առաջ և հարկաւոր զիպուածներում թարգմանում է բողոքողին, որ և ստորագրում է. իսկ նրա անգրագիտութեան դէպքում, նրա խնդրով ստորագրում է մի այլ անձն:

Ծանօթութիւն: Ջրից օգտուելու իրաւունք ունեցողների լիազօրները, հաւատարմատարներն ու ներկայացուցիչները, ունին իրաւունք բողոքելու, եթէ մինչև անգամ նրանց տրուած համախօսական-

ների, հրամանների կամ հաւատարմութիւնների մէջ առանձին ցուցումն չը լինի այդ բանի: Նրանք համարվում են լիազօր պաշտպաններ իրենց հաւատարմութիւն տուողների շահերի նոյնպէս և գլխաւոր ատեանում:

30) Նախընթաց յօդուածում որոշուած բողոքներից աւելի մասնաւոր բողոքներ (չաստնի ժալօբա) տալ չէ թոյլատրվում, ատենի առանձին անկանոն գործողութիւնները կարելի է ցոյց տալ այն բողոքների մէջ, որոնք արվում են յիշեալ յօդուածի հիման վրա:

31) Վճռի յայտնելու ութերորդ օրը ատենի դռնեաց նստում յայտնվում է, թէ ո՞վ է բողոքել և ի՞նչ են բողոքաւորի պահանջները:

32) Գետի և նրա վտակների ջրից օգտուելու իրաւունքների մասին տրուած վճիռները յայտնելուց յետոյ, ատեանը նոյն իսկ հիմունքներով որոշում է առուհանքերի և նրա ճիւղերի ջրից օգտուելու իրաւունքները (ծանօթ. 1. 23 յօդ. ա. մասի):

Ծանօթութիւն: Եթէ դժուարութիւններ չը պատահեն միաժամանակ որոշելու գետի և նրա վտակների ու առուհանքերի ջրից օգտուելու իրաւունքները, ատեանը այդ իրաւունքների մասին ընդհանուր վճիռ է տալիս:

33) Գետի և նրա վտակների ոռոգելի ջրից

օգտուելու իրաւունքներին վերաբերող վճիռը կոչ-
վում է գլխաւոր, իսկ նոյն գետի և նրա վտակնե-
րից հանուած առուհանքների ջրից օգտուելու իրա-
ւունքներին վերաբերող վճիռը կոչվում է կախումն
ունեցող վճիռ:

34) Գլխաւոր և կախումն ունեցող վճիռները
տրուելուց և յայտնելուց յետոյ, բողոքելու իրաւուն-
քով, ատեանը այդ վճիռները իսկական գործերի
ու տրուած բողոքների հետ միասին ուղարկում է
ջրերի վերատեսչին:

35) Նախընթաց (1—34) յօդուածներում բա-
ցատրեալ հիմունքներով ատեանը որոշում է լճերի
և այլ առանձին ջրամբարների ոռոգող ջրից օգ-
տուելու իրաւունքները:

36) Գաւառի (մահալի) ջրից օգտուելու իրա-
ւունքները որոշող բոլոր վճիռները ջրերի վերա-
տեսչին ուղարկելուց յետոյ ատենի խնդիրն աւար-
տուած է համարվում ու փակվում է:

37) Ջրերի վերատեսուչը չէ վերադննում ու-
ռոգող ջրից օգտուելու իրաւունքները, որ ճա-
նաչուած են գաւառական (մահալի—օկրուժնոյ)
ատեանների վճռով. բայց վերաստուգում է այդ
վճիռները միայն տեխնիկական և ձեական կող-
մից և եթէ նկատում է նրանց մէջ այնպիսի սը-
խալներ և անկանոնութիւններ, որոնց պատճա-

ռով այդ վճիռը չէ կարելի ճանաչել իբրեւ. վա-
ւերական և ուժ ունեցող փաստաթուղթ (ակա),
որը հաստատում է ջրից օգտուելու իրաւունքը,
այն ժամանակ նա այդ մասին առաջարկում է վճի-
ռը ստանալու օրից մի ամսից ոչ ուշ Գլխաւոր ա-
տենին: Իւր տուած առաջարկութեան տպագ-
րուած պատճէնները տեղական լեզուներով թարգ-
մանուած ուղարկում է գաւառական (ուեզդնի) ոս-
տիկանութեանը, գաւառում (մահալում) յայտնելու
համար:

38) Գաւառական (օկրուժնոյ) ատենի վճիռն,
եթէ նրա մասին չեն հետեւել ոչ վիճողներից
բողոքներ և ոչ ջրերի վերատեսչից նկատողու-
թիւններ, համարվում է զօրութիւն ստացած:
Այդ վճիռը նրա հետ կցուած ցուցակների (վե-
դօմօսաների) հետ միասին, ծառայում է իբրեւ
փաստաթուղթ (ակա), որ ոռոգող ջրից օգտուե-
լու իրաւունքը որոշում է: Բայց եթէ կախումն ու-
նեցող վճռի մասին ոչ բողոք է եղել և ոչ նկա-
տողութիւն, իսկ բողոքը և նկատողութիւնը գլխա-
ւոր վճռի մասին է եղել, այն ժամանակ կախումն
ունեցող վճիռը զօրութիւն ստացած չէ համար-
վում:

ՋՐԻՅ ՕԳՏՈՒԵԼՈՒ ԻՐԱԻՈՒՆՔՆԵՐԸ ՈՐՈՇՈՂ ԳԼԽԱՒՈՐ
ԱՏԵԱՆԻ ՄԱՍԻՆ:

39) Ջրից օգտուելու իրաւունքները որոշող գլխաւոր ատեանը կազմվում է նախագահութեամբ Թիֆլիզի սուրբերի պալատի մի անդամի, որին նշանակում է Արդարադատութեան նախարարը, ջրաբաշխական գործերի իրաւագէտ խորհրդականից, առանձին սուրա համար նշանակած Կովկասու քաղաքական բաժնի կառավարչապետի կողմից մի անդամից և մէկ ջրաբաշխ խնժիկներից, որ չի մասնակցել գաւառական ատենի վճռին և որին նշանակում է ջրերի վերատեսուչը: Գլխաւոր ատենին գործի մասին զեկուցումն տալն ու վճռի գրելը իրաւագէտ խորհրդականին է յանձնվում:

40) Ջրերի վերատեսուչը գործերը յանձնում է գլխաւոր ատենին նրանց մասին եղած բողոքների և նկատողութիւնների հետ միասին: Եթէ բողոքներն ու նկատողութիւններն վերաբերում են գլխաւոր վճռին, այն ժամանակ նրանց հետ միասին յանձնվում են և կախումն ունեցող վճիռների գործերն էլ, այն դիպուածի համար, երբ հարկաւոր լինի վերջիններին մէջ փոփոխութիւն անել: Եթէ բողոքներն ու նկատողութիւնները վերաբերում են կախումն ունեցող վճիռներին, գլխաւոր վճռի գործն յանձ-

նելվում է գլխաւոր ատենին միայն ի կշռադատութիւն:

41) Գլխաւոր ատեանը նիստերը (զասեղանիա) բաց է անում ջրի գաւառի (մահալի) սահմանում ըստ կարելոյն մահալի կենտրոնական տեղում: Նիստի բացման տեղի և ժամանակի մասին բնակիչներին իմաց է տրվում ոստիկանութեան միջոցով: Բողոքողները կանչվում են կոչնագրերով:

42) Գլխաւոր ատենի մէջ բացաղրութիւններ տալ թոյլ է տրվում ինչպէս բողոքաւորներին, նոյնպէս և միւս կողմերին (յօդ. 15 և ծանօթ. 29 յօդ.):

43) Գործերի քննութիւնը տեղի է ունենում այն կանոններով, որ սահմանուած են գաւառական ատեանների համար, բայց 16 յօդուածում բացաղրուած կանոնը դաւառը (մահալը) շըրջելու և ջրից օգտուելու իրաւունքի մասին յայտարարութիւններ ընդունելը սրան չէ վերաբերում:

44) Գլխաւոր ատեանը կողմերի (վէճ ունեցողների) զանգաւոր կամ ջրերի վերատեսչի նկատողութիւնը օրինաւոր ճանաչելուը յետոյ, համապատասխան փոփոխութիւններ է անում գաւառական ատենի վճռի մէջ:

45) Ճանաչուած իրաւունքների ցուցակի մէջ, որը կցուած է գլխաւոր ատենի վճռին, ներմուծվում են (գրւում են) ինչպէս գաւառական ատենի

ճանաչած այն իրաւունքներն, որ զլիսաւոր ատենը անփոփոխ է թողել, նոյնպէս և այն իրաւունքները, որ ճանաչել է զլիսաւոր ատենը:

46) Գլխաւոր ատենի վճիռներն ու նրանց հետ կցուած ցուցակները (վեգումստները) համարվում են իբրեւ փաստաթղթեր (ակտեր), որոնք որոշում են ոռոգող ջրից օգտուելու իրաւունքները և յանձնվում են բոլոր իսկական գործերի հետ ջրերի վերատեսչին պահպանութեան և այդ վճիռներից և նրանց կցուած ցուցակներից պատճէններ տալու համար: Գլխաւոր ատենի ապօրինի վճիռների ղէմ բողոքները և գործը կրկին քննելու (վերաքննելու), նոր յայանուած հանգամանքների պատճառաւ, խնդրագիրը, տրվում է Կովկասու քաղաքական բաժնի Կառավարչապետին, որը իւր եզրակացութիւններով ներկայացնում է Կառավարիչ Սենատի առաջին ղէպարտամէնտի հայեցողութեան և այն զիսուածում, երբ Սենատը այդ բողոքը կամ խնդիրը յարգելի է գտնում, գործը յետ է դարձնում զլիսաւոր ատենին նորից քննելու (վճռելու) համար: Յիշեալ բողոքների և խնդրագրերի տալը չէ դադրեցնում կայացած վճռի գործադրութիւնը:

47) Ամբողջ գաւառում (մահալում) ջրից օգտուելու ճանաչած իրաւունքների ցուցակները (վեգումստները) տպվում են ջրերի վերատեսչի կար-

գադրութիւնով և նրա սեփական ու իրաւագէտ խորհրդականի (իւրիսկօնսուլտի) ստորագրութիւններով մի ընդհանուր տետրում բոլոր գաւառի (մահալի) համար, ուղարկվում են գաւառի (մահալի) բոլոր ղիւղական կառավարութիւններին և տրվում են որոշուած գնով գործին մասնակցողներին նրանց խնդրի համաձայն:

Ցուցակների քաղուածքները, որ վաւերացրած են ջրերի վերատեսչի և իրաւագէտ խորհրդականի ստորագրութիւններով, ծառայում են իբրեւ վկայականներ ոռոգող ջրերից օգտուելու իրաւունքների և ապացոյցներ են (փաստաթղթեր) այդ իրաւունքներին վերաբերեալ վէճերը վճռելու ժամանակ:

Մասնակցողների (շահ ունեցողների) խնդրով ջրերի վերատեսուչը տալիս է նրանց ժամանակաւոր ատենի վճիռների պատճէնները (կօպիէքը), իւրաքանչիւր թերթի արտագրութեան համար 50 կօպէկ վճար ստանալով:

ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 3-ԻՆ 1890 ԹՈՒԻ ԲԱՐՁՐԱԳՈՅՆ
ՀԱՍՏԱՏՈՒԱԾ ՊԵՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԳԻ ԿԱՐԾԻՔԸ ԱՆԴՐ-
ԿՈՎԿԱՍՈՒՄ ՀՈՂԵՐԸ ՈՌՈԳԵԼՈՒ ԶՐԵՐԻՅ ՕԳՏՈՒԵԼՈՒ
ՄԱՍԻՆ:

III. Ի լրումն պատժական կանոնադրքի (ուլոժենիյէ
օ նակազանիախ) համապատասխան մասերի և օրի-
նադրքի այն պատիժների (ուստաւ օ նակազանիախ)
որ սահմանում են հաշտարար դատաւորները (մի-
րովոյ սուդիէքը), կարգադրել:

Ինքնակամ կամ հակառակ ջրերից օգտուելու
համար սահմանուած կանոնադրութեան օգուտ քա-
ղողներն այն ջրամբարներից, որոնց վրայ տարած-
վում է Անդրկովկասում հողեր ոռոգելու ջրերից
օգտուելու մասին սահմանուած կանոնադրութեան
զօրութիւնը, իբրև յանցաւոր ենթարկվում են բան-
դարկութեան (արէստի) ոչ աւելի քան մի ամիս ժա-
մանակով, կամ դրամական տուգանքի ոչ աւելի 100
ռուբլուց: Այդպիսի պատժի կենթարկուին նաև
այն յանցաւորները, որոնք—ա) անմաքրութիւնով
կը լցնեն յիշեալ ջրամբարները, կամ թէ անասուն-

ներ կը քշեն նրանց մէջ, կամ կենդանիներին անց
կը կացնեն այնպիսի տեղերով, որ դրա համար չեն
նշանակուած. բ) չեն կատարիլ կամ որոշուած ժա-
մանակին չեն հասցնիլ այն աշխատանքները (շի-
նութիւնները) կամ ուրիշ պարտականութիւնները,
որ վերոյիշեալ ջրամբարների կամ ոռոգման շինու-
թիւնների պահպանութեան համար են. գ) այն-
պիսի ցանքեր և տնկեր կ'անեն, որ արգելուած են
այդ ջրամբարների պահպանութեան համար հաս-
տատուած կանոններով. և դ) կը խանգարեն Անդր-
կովկասում տեղացիների ոռոգմանը կամ հեղեղնե-
րից ազատելու յարմարեցրած միջոցները (շինուած-
ները) և ամենայն տեսակ այս նպատակին ծառայող
տուանձին շինութիւնները, բացի նրանցից, որոնց
խանգարումը նախատեսուած է պատժական կանո-
նադրքի (ուլոժենիյա օ նակազանիախ) 1087 յօդուա-
ծում:



ՄՄ Հայագիտական գրադարան



MAL014818

